

**ՀՀ Լոռու մարզի Արջուտ համայնքի տարածքում նախատեսվող ոսկու հանքաքարի վերամշակման ֆաբրիկայի կառուցման և շահագործման «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման» հաշվետվության վերլուծություն**

**1. Ներածություն**

ՀՀ Լոռու մարզի Արջուտի ոսկու հանքավայրի վերամշակման համար նախատեսվող ֆաբրիկայի տեղանքը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիսային մասում՝ Լոռու մարզում՝ Վանաձոր քաղաքից 17 կմ հեռավորության վրա:

Ֆաբրիկայի կառուցման և շահագործման հայտը ներկայացրել է «ԲԵԿՏԵԿ-ԷԿՈ» ՍՊԸ-ն: Արջուտի ոսկու հանքավայրի շահագործման թույլտվությունը և դրական «ԲԵԿՏԵԿ-ԷԿՈ» ՍՊԸ-ն ստացել էր 2014թ-ին:

«ԲԵԿՏԵԿ-ԷԿՈ» ՍՊԸ-ն բնապահպանական փորձաքննության համար 2015 թվականին ներկայացրել է ՀՀ Լոռու մարզի Արջուտի ոսկու հանքաքարի վերամշակման ֆաբրիկայի կառուցման և շահագործման «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման» հաշվետվություն [1]:

**2. ՇՄԱԳ նկարագրությունը**

ՇՄԱԳ հաշվետվությունը կազմվել է 2015 թվականին, բաղկացած է ներածությունից, 10 բաժիններից, գրականության ցանկից, ծավալը կազմում է 50 էջ, տես [1]: Աշխատանքում, համաձայն բովանդակության ցանկի, բերված են գործունեության համար նախատեսվող տարածքի մակերեսային նկարագրությունը, տարածաշրջանի սոցիալ-տնտեսական պայմանները, նախատեսվող գործունեության նկարագրությունը, շրջակա միջավայրի վրա սպասվող ազդեցությունը, վնասի գնահատումը, բնապահպանական և, արտակարգ իրավիճակներում նախատեսվող միջոցառումները, փակման ծրագրերի ընդհանուր նկարագիրը, շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիտորինգի ծրագրի ամփոփագիրը [1]:

**3. ՇՄԱԳ-ի թերությունները**

*Անհամապատասխանությունները և բացթողումները շրջակա միջավայրի առկա իրավիճակի գնահատման, ազդեցությունների կանխատեսումների, մեթոդական և մասնագիտական տեսանկյուններից:*

Ստորև բերված են մի շարք էական թերությունների նկարագրությունները, որոնք առկա են ներկայացված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման» հաշվետվության մեջ: (Պահպանված են [1] հաշվետվություն համարակալումները):

**1.5. Ջրային ռեսուրսներ:** Բաժնում բերված են Փամբակ գետի հիդրոլոգիական հիմնական քանակական տվյալները, սակայն հանքարդյունաբերական գոտու և հարակից հնարավոր ազդեցության գոտիների գետավազանի մակերևույթային ջրերի հիդրոմորֆոլոգիական ներկայիս, *սկզբնական (մինչև նախատեսված գործունեության սկսելը) վիճակը ներկայացված չէ:*

Փամբակի ջրերի հիդրոքիմիական որակի տվյալներ ոսկու արդյունահանման և կորզման ինդիկատորային ցուցանիշների մասով նախատեսվող գործունեության ազդեցության գոտում բերված չէ, միայն հղում է կատարված ՀՀ ԲՆ «Հայէկոմոնիտորինգ» ՊՈԱԿ-ի «Շրջակա միջավայրի էկոլոգիական մոնիթորինգի արդյունքների մասին» 2014 թ. տարեկան տեղեկանքի վրա, տես [2]: Համաձայն բերված տվյալների Փամբակ գետի ջրերը «միջին» որակի են (3-րդ դաս), պայմանավորված ամոնիում և նիտրատ իոններով աղտոտվածությամբ, ինչն առնչություն չունի հանքարդյունաբերության հետ:

ՇՄԱԳ-ում գետավազանի մակերևույթային ջրերի հիդրոկենսաբանական հետազոտություններ ընդհանրապես ներկայացված չեն, հիդրոկենսաբանական որակի վերաբերյալ տվյալներ չկան:

Փամբակի գետավազանի ջրերի էկոլոգիական վիճակի գնահատման երեք բաղադրիչներից հիմնականը՝ հիդրոկենսաբանականը ՇՄԱԳ-ում բացակայում է, իսկ երկրորդ բաղադրիչը՝ հիդրոմորֆոլոգիականը, ներկայացված է խիստ անբավարար:

Փամբակի գետավազանի մակերևույթային ջրերի հատակային նստվածքների քիմիական կազմի, հատակային ֆլորային, ֆաունայի, հատկապես ջրերի որակի հիմնական բնութագրիչ հանդիսացող հատակային մակրոանողնաշարավորների տեսակային կազմի ուսումնասիրություններ ՇՄԱԳ հաշվետվության մեջ ընդհանրապես ներկայացված չեն, տես [1]:

Ստորերկրյա ջրերի մասին տեղեկություններ ՇՄԱԳ հաշվետվությունում նույնպես ներկայացված չեն, ինչը լուրջ բացթողում է: Հղումային վիճակի տվյալների բացակայության պատճառով հետագայում, **Ֆաբրիկայի շահագործման ընթացքում, հնարավոր չի լինի պարզել գրունտային և ընդհանրապես ստորերկրյա ջրերի բաղադրության վրա հանքի շահագործման ազդեցությունը:**

Այսպիսով, «ԲԵԿՏԵԿ-ԷԿՈ» ՍՊԸ-ի կողմից 2015 թվականին ներկայացրած «ՀՀ Լոռու մարզի Արջուտի ոսկու հանքաքարի վերամշակման ֆաբրիկայի կառուցում և շահագործում» ծրագրի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման» հաշվետվությունը, տես [1], մակերևույթային և ստորերկրյա ջրերի վիճակի գնահատման տեսանկյունից կազմված է խիստ թերի: Նախատեսվող գործունեության գոտում, Փամբակ գետավազանի ջրերի որակի վերաբերյալ բերված տվյալները խիստ սահմանափակ են: Թերի տվյալների ու գնահատականների պատճառով ֆաբրիկայի շահագործման և փակման փուլերում կոժվարանա և նույնիսկ գործնականում անհնարին կդառնա Փամբակի ավազանի ջրերի վրա սպասվող բացասական ազդեցությունների բացահայտումն և ազդեցության հետևանքների գնահատումը:

### 1.6. Հողային ծածկույթ

Բաժնում նշված է. «անմիջապես ֆաբրիկայի համար նախատեսված տարածքում հողի հետազոտություններ կիրականացվեն ֆաբրիկայի կառուցման համար անհրաժեշտ բոլոր

թույլտվությունները ստանալուց հետո, շինարարական աշխատանքներից առաջ, որպեսզի համեմատությունը կատարվի այդ պահին գոյություն ունեցող ֆոնային վիճակի հետ»: Հետազոտությունների պլանը բերված է սույն հաշվետվության մշտադիտարկումների ծրագրում: Այսինքն հողերի և լանդշաֆտների նախնական վիճակի բնութագրերը ՇՄԱԳ հաշվետվության մեջ բացակայում են:

**Փաստացի անտեսված է** «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փրճաքննության մասին» ՀՀ օրենքի (21.06.2014) 7-րդ հոդվածի 1-ին կետի (Գնահատման և փորձաքննության իրականացման ընթացքում դիտարկվում են ...) պահանջները [3]: Մասնավորապես անտեսված են 7-րդ հոդվածի 1 կետի 3-րդ և 5-րդ ենթակետերի պահանջները.

3) հողը՝ նպատակային նշանակությունը, հողատեսքը, գործառնական նշանակությունը, կարգը, որակը, վիճակը, կազմը, աղտոտվածությունը, դեգրադացիան, բերրի շերտի օգտագործումը, հողերի այլ բնութագրեր),

5) ռելիեֆը, լանդշաֆտը, բնության հատուկ պահպանվող տարածքները, բնակավայրերի կանաչ գոտիները, միգրացիոն գոտիները և ուղիները,

**1.9. Տարածքի ամփոփ բնապահպանական բնութագիրը:** Բաժնում պարզապես ներկայացված է՝ «Թեկուզ տեղանքում չեն իրականացվել հատուկ հետազոտություններ, օդային ավազանի, մակերևութային ջրային ռեսուրսների և հողածածկի աղտոտվածության վերաբերյալ, սակայն նախկինում որևէ գործունեության բացակայությունը հիմք է հանդիսանում ենթադրելու, որ շրջակա միջավայրի աղտոտվածությունը չի գերազանցում բնական մակարդակը» [1]:

**Փաստացի ներկայիս, հղումային վիճակի և որակի մասին քանակական տվյալներ ՇՄԱԳ-ում ներկայացված չեն:** Հղումային վիճակի տվյալների բացակայության պատճառով, ֆաբրիկայի շահագործման ընթացքում, հնարավոր չի լինի պարզել գրունտային և ընդհանրապես ջրերի, օդային ավազանի, հողերի, շրջակա միջավայրի այլ օբյեկտների և բաղադրիչների վրա ֆաբրիկայի շահագործման սպասվող բացասական ազդեցությունը:

## **5.Շրջակա միջավայրի վրա ազդեցությունը**

*Շրջակա մթնոլորտային օդային ավազանի վրա ազդեցությունը* (տես 5.1. ենթաբաժինը) ենթաբաժնում բերված են վնասակար նյութերի ցրման որոշ հաշվարկներ, որոնց հիման վրա կատարվել է եզրակացություն. «Մթնոլորտում վնասակար նյութերի ցրման հաշվարկների արդյունքերը ցույց են տալիս, որ սպասվելիք գետնամերձ կոնցենտրացիաները գտնվում են բնակելի գոտիների համար սահմանված նորմերում»:

*Ազդեցությունը ջրային ռեսուրսների վրա:* ՇՄԱԳ հաշվետվության 5.1 ենթաբաժնում ուղղակի հայտարարված է. ջրերի արտահոսք ֆաբրիկայի տարածքից տեղի չի ունենա: Իսկ 6.2. ենթաբաժնում (Ջրային ռեսուրսներ) նշված է. Ֆաբրիկայի շահագործման

արդյունքում աղտոտված արտահոսք չի առաջանում, անձրևաջրերը հիմնականում հողածածկի միջոցով ներծծվում են խորքերը: Որևէ հիմնավորում բերված չէ: Մակերևույթային կամ ստորերկրյա ջրերի վրա որևէ ազդեցություն կամ ազդեցության բացակայություն չի քննարկվում: Իրականության մեջ ՀՀ տարածքում գործող նմանատիպ ֆաբրիկաների շահագործման հետևանքով շրջակա տարածքների ջրերը գտնվում են մեծ ճնշման տակ: Օրինակ, Մեղրի գետ գետը՝ *Թիսկուտ և Վարդանիձոր բնակավայրի միջև, Լիճքվազ-Թեյի հանքավայրից ներքև*, հանդիսանում է ռիսկային ջրային մարմին, (ՌՁՄ-25), նմանատիպ ճնշման արդյունքում տես [4]: Մեկ այլ օրինակ է Կարձևան գետը, որի մեջ հանքարդյունաբերության կեղտաջրերի ուղղակի ներհոսք չկա, սակայն հանքարդյունաբերական գոտուց տարբեր ճանապարհներով գետի մեջ ներթափանցում են աղտոտիչներ և գետի էկոհամակարգը ներկայումս գործնականում ոչնչացված է:

*Ազդեցությունը հողային ռեսուրսների վրա:* ՇՄԱԳ հաշվետվության 5.1 ենթաբաժնում ուղղակի հայտարարված է. «անմիջապես հողի որակի փոփոխություն չի նախատեսվում, հետևաբար հողի աղտոտում չի սպասվում»: Նույնատիպ հայտարարություն է ներկայացված 6.3. «Հողային ռեսուրսներ» ենթաբաժնում. հողային ռեսուրսների աղտոտում չի նախատեսվում: Սա չհիմնավորված, դեկլարատիվ բնույթի հայտարարություն է, հակասում է ՀՀ տարածքում գործող ֆաբրիկաների՝ շրջակա միջավայրի հողերի վրա բացասական ազդեցության հայտնի նախադեպերին և պրակտիկային: (Տես Ջրային ռեսուրսներ ենթաբաժնին վերաբերվող պարբերությունը):

*Արտադրական թափոններ:* Հանքաքարի վերամշակման արդյունքում ստացվող և անմիջապես ֆաբրիկայի տարածքում տեղակայվող «չոր» պոչանքների ազդեցությունը ՇՄԱԳ-ում ընդհանրապես չի քննարկվում:

*Սոցիալական ազդեցությունը և ռիսկերը:* 5.3. Սոցիալական ազդեցությունը և ռիսկերը բաժնում ներկայացված է, որ Ֆաբրիկայի շահագործման ընթացքում առաջանում են բնակչության սոցիալական և առողջական վրա բացասական ազդեցության հետևյալ տեսակները. տեղանքի փոշոտվածության, երթևեկության և աղմուկի մակարդակի ավելացում, տեղանքի պատկերների փոփոխություն: Սոցիալական ազդեցության (բացասական) տեսանկյունից հաշվետվության մեջ քննարկված չէ միջազգային փորձից բխող այնպիսի կարևոր գործոն, ինչպիսին էկոհամակարգային ծառայությունների պոտենցիալի ռեալ նվազումն է, որը շրջակա բնակավայրերի բնակչության համար կունենա նշանակալի բացասական սոցիալական ազդեցություն: Այդ մասին է վկայում նաև ՇՄԱԳ-ի 5.2 ենթաբաժինը, որտեղ ուղղակի նշված է.

«Ֆաբրիկայի տարածքում բուսականությունը կոչնչացվի: Հողի բերրի շերտը կտեղափոխվի այլ վայր: Տարածքում բնակվող կենդանիները կհեռանան ֆաբրիկայի տեղամասից»:

Իսկ բուսականության, կենդանական աշխարհի և հողի բերրի շերտի ոչնչացումը ուղղակիորեն կրերի էկոհամակարգային ծառայությունների պոտենցիալի գրոյացմանը:

Ներկայացված ՇՄԱԳ-ում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (21.06.2014) 7-րդ հոդվածով (Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում դիտարկվող շրջակա միջավայրի օբյեկտները և բնութագրերը) **ազդեցության ենթակա շրջակա միջավայրի 13 օբյեկտներից ու բնութագրերից ընդհանուր առմամբ քննարկված և ներկայացված են ընդամենը 8-ը, որոնցում առկա են վերևում ներկայացված թերություններն ու բացթողումները:**

ՇՄԱԳ-ում քննարկված և ներկայացված չեն միջազգային առաջավոր փորձի և ՀՀ միջազգային պարտավորություններից բխող հնարավոր ազդեցության գնահատմանը ենթակա շրջակա միջավայրի հետևյալ օբյեկտները, բնութագրերը, բաղադրիչները.

- Գյուղատնտեսական մշակաբույսերի վրա ազդեցությունները, որը անմիջականորեն կապված է բնակչության սոցիալ տնտեսական վիճակի և առողջապահական հիմնահարցերի հետ
- Կլիմայի փոփոխության վրա ազդեցությունը
- Կլիմայի գլոբալ փոփոխության հետևանքների ազդեցությունը
- Ազդեցության տարբեր գործոնների և ուղիների գումարային ազդեցությունը
- Էկոհամակարգային ծառայությունների վրա ազդեցությունը
- Էկոհամակարգային ծառայությունների նվազման հետևանքով տնտեսական և սոցիալական վնասների գնահատումը:

***Բնապահպանական մշտադիտարկումների (մոնիթորինգի) ծրագիր՝ 10-րդ բաժնում*** ներկայացված է աղյուսակ՝ Մշտադիտարկումների ծրագիր: Նախապատրաստական փուլում, ֆաբրիկայի տարածքի (օդ, հող, ջուր) մոնիտորինգի պատասխանատու սյունակում նշված է ՀՀ ԲՆ «Էկոմոնիթորինգ» ՊՈԱԿ –ը: Սա խիստ տարօրինակ է, որովհետև պետական մոնիտորինգային ծառայությունը չի կարող պատասխանատու լինել մասնավոր ձեռնարկությանը պատկանող ֆաբրիկայի տարածքի մոնիտորինգի համար: Բացի այդ, առկա է երկրորդ հակասությունը. մոնիտորինգի հաճախականությունը սյունակում նշված է՝ միանվագ: Միանվագը մշտադիտարկում կամ մոնիտորինգ չէ:

Աղյուսակի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իրականության մեջ ֆաբրիկայի շահագործման և փակման փուլերում մոնիտորինգ նախատեսված չէ: Միայն ցիանացման տեղամասում է նախատեսված ջրերում ցիանիդի առկայության մշտադիտարկում՝ եռամսյակը մեկ հաճախականությամբ:

Փաստացի ոսկու հանքաքարի մշակման (ցիանային) ֆաբրիկայի ՇՄԱԳ-ում շրջակա միջավայրի բաղադրիչների, օբյեկտների և դրանց վրա ազդեցության էֆեկտների

մոնիտորինգ, մշտադիտարկում ընդհանրապես նախատեսված չէ, ինչն օրենսդրության պահանջների ուղղակի անտեսում է:

### **Ամփոփում/ եզրակացություն**

ՀՀ Լոռու մարզի Արջուտի ոսկու հանքաքարի վերամշակման ֆաբրիկայի կառուցման և շահագործման ծրագրի՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման» հաշվետվության վերլուծությունը ցույց է տալիս, որ

**ՇՄԱԳ –ը բովանդակային և մասնագիտական հիմնավորվածության ու մշակվածության առումներով խիստ թերի է և չի համապատասխանում ՀՀ գործող օրենսդրության և ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններից բխող պահանջներին:**

**Ներկայացված ՇՄԱԳ-ը պետք է հետ ուղարկվի լրամշակման, գործող օրենսդրության և առաջավոր փորձից բխող պահանջներին համապատասխանեցնելու համար:**

### **Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին**

“ԲԱԿՏԵԿ-ԷԿՈ” ՍՊԸ-ն Արջուտի ոսկու հանքաքարի վերամշակման ֆաբրիկայի կառուցման և շահագործման ծրագրի՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը 2015 թվականին ներկայացրել է Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2015 թվականին տրվել է դրական եզրակացություն (թիվ 74, 19.09.2015), տես [5]:

Եզրակացության մեջ ներկայացված է փորձաքննական 5 պահանջ: Այդ պահանջներն են (հակիրճ շարադրանքը ըստ [4]-ի):

1. Գործունեության թույլտվություն ստանալ՝ ներառյալ հողերի գործառնական նշանակության փոփոխությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
2. Աշխատանքների իրականացման ընթացքում խստագույնս հետևել նախագծման նորմերին և բնապահպանական պահանջներին, պահպանել բնապահպանական և շահագործման նորմերը:
3. Հանքաքարի տեղափոխումն իրականացնել ծածկած տրանսպորտային միջոցներով: Նախատեսել հարակից տարածքների ծառատնկման և կանաչապատման աշխատանքներ:
4. Ծինարարության և շահագործման ընթացքում առաջացած շինադրի հեռացումը, և ջրօգտագործումը իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. Գործունեության ընթացքում իրականացվող մոնիտորինգի տվյալները պետք է հասանելի լինեն պետական մարմինների և հասարակության համար:

Ակնհայտ է, որ բերված 5 պահանջներից 4-ը՝ 1,2, 4 և 5, փորձաքննական չեն, այլ գործող օրենսդրության պահանջներն են: Միայն 3-րդ պահանջն է մասնակիորեն հանդիսանում փորձագիտական և միտված շրջակա միջավայրի պահպանմանն ու բարելավմանը: Ըստ էության, որպես փորձաքննական պահանջ հիմնականում ներկայացվել են գործող օրենսդրության պահանջները, այն էլ թերի ձևով:

Այն հանգամանքը, որ «ԲԱԿՏԵԿ-ԷԿՈ» ՍՊԸ-ի ներկայացրած ՇՄԱԳ հաշվետվությունում շրջակա միջավայրի նախնական վիճակի իրական հետազոտություն կատարված և ներկայացված չէ, շրջակա միջավայրի բաղադրիչներից մեծ մասի վրա ֆաբրիկայի գործունեության ազդեցության գնահատում կատարված չէ, շրջակա միջավայրի մոնիտորինգ նախատեսված չէ, փորձաքննության եզրակացության վրա չի ազդել և նույնիսկ չի դարձել փորձաքննական պահանջ:

Փաստացի փորձաքննություն, որպես այդպիսին չի իրականացվել, լրացուցիչ հետազոտություններ ու գնահատումներ, ներկայացված գնահատականների ու կանխատեսումների վերլուծություններ, ստուգիչ վերահաշվարկներ չեն իրականացվել: Նշված գործողությունների կատարման պահանջ «ԲԱԿՏԵԿ-ԷԿՈ» ՍՊԸ-ին նույնպես փաստացի չի ներկայացվել: Փորձաքննական եզրակացությունը (դրական) տրվել է ֆորմալ մոտեցմամբ, դեկլարատիվ բնույթի պահանջներով և շաբլոնային ձևակերպումներով:

### **Ամփոփում**

Փորձաքննական պահանջների մեծագույն մասի նմանատիպ բովանդակությունը բնորոշ է հանքարդյունաբերական ձեռնառկություններին տրված եզրակացություններին, ինչն այս տեսքով արժեզրկում է, անիմաստ ու ավելորդ է դարձնում բուն փորձաքննության ինստիտուտը: Եզրակացությունների տրման գործընթացը ներկայիս սցենարով, փաստացի առանց իրական փորձաքննության ու վերլուծության, ընդամենը ձևական բնույթի, ավելորդ, ժամանակատար բյուրոկրատական պրոցեդուրա է:

Փորձաքննական եզրակացությունների տրման գործընթացն ու բովանդակությունը անհրաժեշտ է մոդեռնիզացնել և համապատասխանեցնել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջներին և գաղափարախոսությանը, համաշխարհային առաջավոր փորձին և ՀՀ կառավարության ընդունած ուղեցույցներին [6]:

*19.10.2016*

### **Սեյրան Մինասյան**

1. ՀՀ Լոռու մարզի Արջուտի ոսկու հանքաքարի վերամշակման ֆաբրիկայի կառուցման և շահագործման «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման» հաշվետվություն, 2015թ.:

2. ՀՀ ԲՆ «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի Տարեկան և ամսեկան տեղեկանքներ. «Մակերևութային ջրերի և բնակավայրերի օդային ավազանի վիճակի մասին, 2014-2016», [www.armmonitoring.am](http://www.armmonitoring.am)
3. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փրձաքննության մասին» ՀՀ օրենքի (21.06.2014):
4. «Հարավային ջրավազանային տարածքի 2016-2021 թվականների կառավարման պլանը և արդյունավետ կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 26.05.2016թ. N 539 - ն որոշում և «2016-2021 թվականների միջոցառումների ծրագիր հարավային ջրավազանային տարածքի կառավարման պլանի» (Հավելված ՀՀ կառավարության 2016թ. մայիսի 26-ի նիստի N 20 արձանագրային որոշման):
5. ՀՀ Լոռու մարզի Արջուտի ոսկու հանքաքարի վերամշակման ֆաբրիկայի կառուցման և շահագործման աշխատանքային նախագծի վերաբերյալ “ԲԵԿԵՏ-ԷԿՈՍՄՐ” ՍՊԸ-ին տրված (թիվ 74, 19.09.2015) Շրջակա միջավայրի վրա ազդեցության եզրակացություն. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ, 19.09.2015:
6. «Հայաստանի հանրապետության կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 4-ի նիստի N 37 արձանագրության 10-րդ կետով հավանության արժանացած արձանագրային որոշման մեջ լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին»ՀՀ կառավարության 29.07.2016թ. N 29 - ն որոշում, հավելվածներ 2-6: